№ 142 ՇԱԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14 **1891** ՇԱԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14 № 142

ՏԱՍՆ ԵՒ ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ԱՌԱՋԻԿԱՑ **1892** ԹԻԱԿԱՆԻՆ

20-ՐԴ ՏԱՐԻ **„ՄՇԱԿ“** 20-ՐԴ ՏԱՐԻ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով: Մենք կը ստանանք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ր., ինն և ութ ամսվանը՝ 8 ր., եօթ ամսվանը՝ 7 ր., վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր., մի ամսվանը՝ 1 ռուբլի:

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարօնսկայա և Բաղարնայա փողոցների անկիւնում, Թամամշեվի տանը).

Կայսերութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Ցայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով. գառին վճարվում է 2 կոպէկ.

«Մշակի» առաջին երեսի վրա մասնաւոր յայտարարութիւններ չեն տպագրվում, այլ տպագրվում են միմիայն՝ լրագիրների յայտարարութիւնները, մահացուցակները և պաշտօնական հաստատութիւնների յայտարարութիւնները, որոնց համար կրկնակի է վճարվում: Մահացուցակի տպագրելը առաջին երեսի վրա արժէ 4 ռուբլի, իսկ չորրորդ երեսի վրա՝ 2 ռուբլի:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

„ТИФЛИССКІЙ ЛИСТОКЪ“.

ПОДПИСКА НА 1892 ГОДЪ.

Газета «Тифлисскій Листокъ» будетъ выходить по прежнему ежедневно, исключая дней послѣпраздничныхъ.

Малый форматъ газеты лишалъ редакцію возможности не только періодически знакомить своихъ читателей съ выдающимися событіями русской и иностранной жизни, но она не могла даже помѣщать ежедневно весь матеріалъ, относящійся къ мѣстному отдѣлу.

Съ цѣлью дать больше матеріала для чтенія, газета съ начала декабря мѣсяца будетъ печататься на бумагѣ средняго листа, въ пять колоннъ.

Съ увеличеніемъ формата «Тифлисскій Листокъ» ежедневно будетъ имѣть всѣ отдѣлы ежедневныхъ газетъ.

Редакція по прежнему направитъ всѣ усилія къ развитію отдѣла о мѣстныхъ злобахъ дня и о выдающихся событіяхъ общественной жизни Кавказа.

ПОДПИСНАЯ ЦѢНА:

Въ Тифлисѣ		Для иногородныхъ	
Съ доставкой: на годъ	5 р. — »	Съ пересылкой: на годъ	6 р. — »
» » на полгода	3 » — »	» » » полгода	3 » 50 к.
» » » 3 мѣс.	1 » 75 к.	» » » 3 мѣс.	2 » — »

Объявленія принимаются для Россіи и заграничныя исключительно въ центральной конторѣ объявленій быв. Метцль, въ Москвѣ.

Редакція и контора помѣщаются: въ Тифлисѣ, на Головинскомъ проспектѣ, въ домѣ Ротинова.

2—3 Редакторъ-издатель Х. Г. Хачатуровъ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինչով բացատրենք.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Բաթումից. Նամակ Բագուից. Նամակ Քութայիսից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի համար փող է հարկաւոր. Իրլանդական կղերը և Գլադստոն. Հնդկաստանի Հայերը. Տեղեկութիւններ Թիւրքաց Հայաստանից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՏԵՂԵԿԱՅՈՑՑ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԻՆՉՈՎ ԲԱՑԱՏՐԵՆՔ

—

Գաւառներից մի քանի Նամակներ ստացանք, որոնց մէջ մեզ հարց են առաջարկում, թէ ինչո՞վ բացատրենք Ալէքսանդր Անանօվի վարմունքը „Մշակի“ դէմ: Նոյն հարցը առաջարկել են մեզ այստեղ, Թիֆլիսում, բազմաթիւ անձինք: „Չէ՞ որ պարոնը ձեզ և ձեր գործունէութեանը սաստիկ համակրում էր, նախագահում էր ձեր յօբելեանի ճաշկերոյթին և այլն և այլն. ուրեմն այժմ նրա հետ ի՞նչ է պատահել....“

Այդ հարցին շատ հեշտ է, մեր կարծիքով, պատասխանել, բացատրելով պ. Անանօվի վարմունքը ընդհանուր հայոց բնաւորութեամբ:

Հայը դիցուք մի որ և է լաւութիւն է —այդ տեսակ պահանջ դառնում է արդէն կորստաբեր և հակահասարակական:

Որքան ուզում էք երախտագիտութիւն պահանջեցէք մասնաւոր մարդուց, բայց հասարակական գործիչից չէք կարող պահանջել, որ ձեզանից մի անգամ ստացած լաւութեան պատճառով նա այնուհետև, իր ամբողջ կեանքի ընթացքում, փակէ իր աչքերը ձեր յաջորդ սխալների վրա, մանաւանդ եթէ ձեր այդ արած հասարակական սխալները շատ խոշոր են:

Մասնաւոր կեանքի մէջ կարող է գոյութիւն ունենալ, նոյն իսկ պէտք է գոյութիւն ունենայ՝ երախտագիտութիւն, խնամութիւն, ազգակցական զգացմունք,—հասարակական կեանքի մէջ, ընդհակառակն, որտեղ հասարակաց գործիչը ծառայում է ոչ թէ իր կամ իր ծանօթի օգտին, այլ ծառայում է ընդհանրութեան շահերին՝ չը կայ և չը պէտք է լինի ոչ խնամութիւն, ոչ ազգակցական զգացմունք, ոչ էլ մասնաւոր կերպով արած լաւութեան վրա հիմնված երախտագիտական զգացմունք...

Մի մարդ մի ուրիշին լաւութիւն, մեծ լաւութիւն է արել. բարերարվածը մասնաւոր կերպով թող իր ամբողջ կեանքի ընթացքում երախտապարտ լինի իր բարերարին: Բայց յանկարծ այդ նոյն բարերարը կամենալով քուէարկվել, դիցուք, քաղաքագլխի պաշտօնի համար և իմանալով, որ այն մարդը, որին ինքն բարերարութիւն է արել, դումայի ձայնաւոր է, դիմում է նրան ասելով. „Այսօր ունեմ որ ինձ սպիտակ քուէ կը դցես:“—„Ոչ, պատասխանում է ձայնաւորը, այստեղ ես այլ և այլ մասնաւոր մարդ չեմ, որից իրաւունք ունես երախտագիտութիւն պահանջել, այլ դումայի ձայնաւոր եմ, հասարակաց գործիչ եմ, և ինչքան էլ լաւութիւն արած լինէիր ինձ, եթէ իմ համոզմունքով քեզ անընդունակ եմ համարում քաղաքագլխի պաշտօնը ստանձնելու,—պարտաւորութիւնս կը համարեմ քեզ սև քուէ դցելու... Դա է իմ քաղաքացիական պարտաւորութիւնս:“

Այսպէս պէտք է վարվի հասարակաց գործիչը:

Մեզանում հակառակն է պատահում. մի մարդ մի ուրիշի հետ առևտրական գործեր ունի, նրանից իր համար մեծ նիւթական շահ է սպասում,—և ահա, չը նայելով որ ինքն համոզված է թէ իր ընկերը անընդունակ է այս կամ այն հասարակական պաշտօն վարելու, դարձեալ միջից կէս է լինում ընտրել տալու հասարակական պաշտօնի վրա այն մարդուն, որի մասին ինքն համոզված է թէ անընդունակ է յիշեալ պաշտօնը վարելու, մի և նոյն ժամանակ համոզված է թէ այդ մարդը ընդհանուր գործին կարող է նոյն իսկ մեծ փնաս տալ. բայց դարձեալ աշխատում է նրան առաջ քաշելու, քանի որ նրանից կախված են իր նիւթական անձնական շահերը... Այդ տեսակները, ուրեմն, զոհում են ընդհանուր շահերը անձնական շահերին:

Մի ուրիշ օրինակ բերենք: Մի մարդ ձեզ մի մեծ լաւութիւն է արել ձեր մասնաւոր կեանքում. ապա այդ նոյն մարդը ընտրվում է, դիցուք, քաղաքագլուխ և շատ վատ է կառավարում քաղաքային գործերը: Դուք հասարակաց գործիչ էք, դիցուք խմբագիր էք, մի լրագիր ունէք ձեր ձեռքում... Ի՞նչպէս էք կարծում, պէտք է լռէք այն բոլոր սխալների մասին, որ գործում է քաղաքագլուխը, որովհետև նա մի ժամանակ, որպէս մասնաւոր մարդ, ձեզ լաւութիւն է արել... Եթէ այդպէս վարվէք, դուք արժանի չէք լինի խմբագրի, հասարակական շահերը պաշտպանողի անուան, իսկ ձեր թերթը արժանի չի լինի հասարակաց շահերին անկաշառ կերպով ծառայող հասարակական օրգանի անուան...

Սակայն հայը անկարող է, սովոր չէ այդպէս դատել, ուրեմն սովոր չէ այդպէս դատել և Ալէքսանդր Անանեան: Նա մտածում է. ես համակրութիւն եմ ցոյց տուել այդ մարդուն, ոչ թէ միայն մասնակցել եմ նրա գրական գործունէութեան յօբելեանին, բայց և աշխատել եմ, թէև ինձ չէ աջողվել (այնու ամենայնիւ բարի ցանկութիւն եմ ունեցել), այդ մարդու լրագրի համար մի խոշոր ֆոնդ կազմել, տարել եմ նրան իմ սեփական կառքով դէպի ճաշկերոյթի տեղը, նախագահել եմ ճաշկերոյթին, գուցէ սեփական գրպանից բաւական փողեր եմ ծախսել, որպէս զի հանդէսը աւելի շքեղ լինի,—և յանկարծ այդ նոյն մարդը այժմ կծու կերպով քննադատում է ինձ, որպէս բարեգործական ընկերութեան նախագահին, քննադատում է իմ գործունէութիւնը....

Հայը սովոր է այն մտքին, որ մի անգամ արած լաւութիւնը պէտք է ընդմիշտ լռեցնէ, կաշառէ մարդուն, այնպէս որ նա երբէք այլ ևս չը համարձակվի քննադատել լաւութիւն արած մարդու հասարակաց գործունէութիւնը: Բայց հայը մոռանում է, չէ կարող այն մտքի հետ հաշտվել, որ հասարակաց գործիչը պէտք է անկաշառ լինի....

Եւ ահա նոյն հայը այն աստիճան կրքոտ է, այնքան կուրանում է անզուսպ կրքի ազդեցութեան տակ, որ հէնց որ տեսնում է իր կարծեցեալ ապերախտութիւնը հասարակաց գործիչի կողմից, վրէժխնդրութեան զգացմունքից շարժված, անմիջապէս սկսում է ուրանալ, ոտնակոխ անել, ցեխի հետ հաւասարեցնել նոյն հասարակաց գործիչի ամբողջ անցեալ գործունէութիւնը, որ նա ինքն մի ժամանակ փառաբանում էր.... Այդ տեսակ մարդիկ (և դրանք մեզանում խոշոր մեծամասնութիւն են կազմում), չեն կարող հաշտվել այն մտքի հետ, որ հասարակաց գործիչը, խմբագիրը, իր ձեռքում հասարակական օրգան ունեցողը՝ չէ կարող իր մասնաւոր, անձնական երախտագիտութեան զգացմունքը ընդհանուր շահերից վեր դասել, այլ յօգուտ ընդհանրութեան պէտք է նոյն ոյժով, նոյն անկողմնապահութեամբ հարուածէ թէ թշնամու և թէ բարեկամի գործած սխալները, պէտք է հարուածէ նրանց բռնած ընթացքը, եթէ համոզված է թէ այդ ընթացքը կորստաբեր է ընդհանրութեան համար:

Հասարակական գործունէութեան մէջ չը կայ ազգակցական զգացմունք, չը կայ խնամութիւն, չը կայ անձնական երախտագիտութիւն,—այլ կայ միայն ընդհանուր շահի օգտին՝ գաղափարների համերաշխութիւն:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱԹՈՒՄԻՑ

—

Դեկտեմբերի 8-ին

Սեպտեմբերից սկսած, երբ ռուսաց թղթադրամի գները սկսեցին ընկնել արտասահմանում, տեղական նաֆթ արդիւնաբերող գործարանատէրերը սկսեցին իրանց գործերը կարողացածին չափ ընդարձակել, որովհետև այդպիսի մի հանգամանքում, որքան էլ նաֆթի գները ընկնէին արտասահմանում, կուրսերի օգուտը ծածկում էր այդ բոլորը: Մանթաշեան իր արտահանութեան չափը հասցրել է այն աստիճանի, որ չափազանցութիւն չի լինի եթէ ասեմ, որ նա գուցէ շուտով մենակ մրցի Ռօտշիլդի հետ: Նոյն ընթացքին հետևում է նաև Եղբ. Ծովեանեանների գործարանը, որը նորերումս բերել տալով Եւրօպայից նոր մեքենաներ, մի ամիս է ինչ որ իր արտահանութիւնը

կրկնապատկել է համարեա։ Խաչատրեանները նորից բաց արին իրանց գործարանը։ Մանթաշեան վճարեց Մելքոնեան և ընկերութեան բոլոր պարտքերը, և այդ վերջին գործարանը ևս մի քանի օրից կրկին կը սկսի բանել։ Մելքոնեանի և ընկերութեան գործում տեղական գործարանատէրերը ցոյց տուին կատարեալ վեհանձնութիւն։

Երբ այդ ֆիրման մի տարի առաջ իր վճարումները դադարեցրեց, ամենքն էլ համոզված էին, որ դա մի խարդախ սնանկութիւն չէր, այլ հետևանք ահագին վնասների, որին անցեալ տարվայ նաւթային կրիզիսի ժամանակ ենթարկվեցան համարեա բոլոր գործարանատէրերը. սակայն ընկերութիւնը այնու ամենայնիւ ունէր իր պարտքերի դիմաց համարեա նոյն քանակութեան և կայք։ Կրեդիտորներից նա ժամանակ ուզեց իր գործերը կարգի դնելու. չը տուին. գործը տրվեց դատարան. և կրեդիտորները, որոնք մեծ մասամբ եւրոպացի և հրէայ թիթեղի և տախտակի գործարանատէրեր էին՝ պահանջում էին, որ դատարանը Մելքոնեանցին բանտարկի։ Հէնց այդպիսի մի բռպէում էր, որ տեղական բոլոր գործարանատէրերը, առանց խտրութեան՝ հայ, յոյն, հրէայ և գերմանացի, յայտնեցին այդ մարդկանց, որ եթէ Մելքոնեանցին կը համարձակվեն նրանք բանտարկել տալ, իրանք այնուհետև բոլոր յարաբերութիւնները կտրում են նրանց հետ։ Կրեդիտորները յետ կանգնեցան իրանց առաջարկութիւնից, և Մանթաշեան այս քանի օրերումս վճարելով Մելքոնեանի տեղ այդ բոլորի պահանջները, վերառաւ այդ գործարանը իր հսկողութեան տակ։ Մելքոնեան քաղաքի մէջ մի յարգված անձնաւորութիւն է, մէկը ամենաբարեխիղճ գործարանատէրերից, որոնք դժբաղդաբար կեանքի մէջ երբէք աջողութիւն չեն ունենում։ Բոլոր մշակները, բանուորները և գործակատարները չնորհակալութեամբ և ափսոսալով են յիշում նրա անունը։

Բաթումի գործարանատէրերի սինդիկատը անցեալ կիրակի տօնեց իր գոյութեան երեքամեակը «Իմպերեալ» հիւրանոցում տուած մի ճաշով, որին ներկայ էին սինդիկատի անդամները և հիւրեր։ Այդ օրվայ առիթով սինդիկատը նուիրել է Ռուսաստանի սովեալներին 500 ռուբլի, հայոց եկեղեցուն 200 ռուբլի և Կ. քահանային 100 ռուբլի։ Դա ինքն ըստ ինքեան մի բոլորովին նոր և ուրախալի երևոյթ է մեր վաճառականական կեանքում։ Վաճառականական ամեն մի ձեռնարկութիւն միշտ աջողութիւն կունենայ, երբ նրան կը վարեն խմբովին և համերաշխութեամբ։ Միայն մի նկատողութիւն։ Ցանկալի էր որ սինդիկատը նոյն իսկ այդ կիրակի օրը իրան գործարանները չը բանեցնէր. ցանկալի էր, որ այդ օրը սինդիկատը չը մոռանար իր այն մի տասնեակ գործակատարներին, որոնք առանց որ և է աւելորդ վարձատրութեան անընդհատ բանում են թէ օրեկան երբեմն աւելորդ մի քանի ժամ և թէ նոյն իսկ կիրակի օրեր. այդպիսի մի տօնի օրը սինդիկատը ամենից առաջ նրանց պէտք է մի մի բան տար. չէ որ այդ տօնը նրանց էլ էր վերաբերում։

Աբ. Ապ.

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Դեկտեմբերի 10-ին

Կիրակի, ամսիս 8-ին, հասարակաց ժողովարանի դահլիճում կայացաւ Կարա-Մուրզայի համերգը՝ մասնակցութեամբ 100 հոգուց բաղկացած իր երկսեռ խմբի։

Կարա-Մուրզայի եօթնամեայ գործունէութեան շրջանում նրա 49-երորդ այս համերգը պակ պիտի համարել նրա տոկուն աշխատութեան, անսովոր ջանքի և անհուն սիրոյ դէպի գաղափարը, դէպի գործը... Անկեղծութիւն, սէր և աշխատանք—ահա այն զէնքը, որով կարողացաւ, վերջապէս, փշրել դարևոր նախապաշարմունքը, պատռել հայ ընտանիքի կեղծ ամօթով աքողված վարագոյրը և լոյս աշխարհ բերել հայ տիկնոջ, հայ օրիորդի չնորհալի ձայնը։ Քսանաչափ կանանց և օրիորդների աջող մասնակցութիւնը տղամարդկանց խմբին ոչ միայն նորութիւն է մեզանում, այլ և փառաւոր յաղթութիւն, յաղթութիւն նորի, յաղթութիւն գեղեցկի, յաղթութիւն պրոգրեսի...

Այն կինը, որը անվայել էր համարում բեմի վրա երգելը, այսօր ուրախութիւն է համարում. այն օրիորդը, որը անպատուութիւն էր անուանում արհեստաւորի հետ երգելը, այժմ հնարաւոր է համարում, և վերջապէս այն մայրը, որ անկարելի էր համարում իր աղջկան, իր կնոջ հրապարակ դուրս բերել—այժմ կարելի է համարում... Կարա-Մուրզա իրականացնելով, վերջապէս, այն, ինչ որ տարիներից ի վեր երազում էր, չոչափելի կերպով ցոյց տուեց հասարակութեան, որ, յիրաւի, կանանց մասնակցութեամբ չատ բան կարելի է անել, որ կանանց մասնակցութեամբ խումբն աւելի ներդաշնակ, աւելի չնորհալի և աւելի աջող կարող է երգել, քան առանց նրանց։ Դահլիճը կատարելապէս լի էր. հասարակութեան ամեն դասակարգից կային մարդիկ, կային նաև այլազգիներ։ Ցատուկ հրաւիրանօք ներկայ էր նաև երաժշտութեան պրոֆէսօր Վայցեխօվսկի, ներկայ էր և երգեցողութեան ու երաժշտութեան ուսուցիչ Խմելեվսկի, որն իր ուսումն աւարտած է Վարշավայի կոնսերվատորիայում։ Երկու մասնագէտներն էլ աւելի քան գոհ մնացին և հիացմունքով խօսում էին Կարա-Մուրզայի ցոյց տուած առաջադիմութեան ու ջանքի վերաբերեալ։ Պրոֆէսօրն անձամբ իր չնորհակալութիւնն ու գովասանքը յայտնեց Կարա-Մուրզային՝ յարակցելով, որ ամենայն վստահութեամբ կարող է Եւրոպա, Ամերիկա գնալ և համակրութիւն գտնել։ Երգած 10—14 երգերից պրոֆէսօրին առաւելապէս դուր էին եկել «Բօյդ բարձր», «Լոռիկ» և ժողովրդական երգերը։

Խումբը, ընդհանրապէս, չատ աջող կատարեց երգերը. հասարակութիւնը միանգամայն գոհ էր. գոհ էր և ինքն Կարա-Մուրզա երգեցողութեան աջողութիւնից։ Ցղամարդկանց խմբի մէջ աչքի էր ընկնում Ամբրումեանցի ձայնը. վերջինս մի արհեստաւոր է. Կարա-Մուրզայի մօտ երգելով չարունակ, այսօր այնքան զարգացել ու կանոնաւորվել է ձայնը, որ աչքի է ընկնում։ Նրա առանձին երգածները բաւական աջող էին և ազդու. մեծ ձայն ունի. լաւ ապագայ կունենայ, եթէ կատարելագործվի—այս կարծիքի էր Կարա-Մուրզա, նոյն կարծիքը յայտնեց և պրոֆէսօրը։

Այդ երեկոյեան երիտասարդութեան կողմից մատուցվեց Կարա-Մուրզային հարիւրից աւելի ստորագրութեամբ մի ուղերձ՝ նրա հօթնամեակի առթիւ. իսկ մի այլ խումբ համակրողների տուեց նրան համեստ գումարով դրամական մի ծրար։

Համերգի վերջին քանի մի անգամ բեմ դուրս կանչելուց յետոյ, մի խումբ երիտասարդներ երաժշտասէտին ձեռքերի վրա բարձրացնելով՝ սկսեցին «օվացիաներ» անել և ապա բուռն ծափահարութիւններով ու կեցցէներով ճանապարհ դրին նրան բենգալեան կրակի գոյնզգոյն լուսերով։ Զուտ արդիւնքից 15% ռուս սովեալների օգտին յատկացրած լինելու պատճառով՝ դահլիճը ձրի էր տրված։

***

ՆԱՄԱԿ ՔՈՒԹԱՅԻՍԻՑ

Դեկտեմբերի 7-ին

Այսօր այստեղ կան բացի բուն իմերէլիներից՝ գուրիացիներ, մինգրելներ, աբխազներ, ավաններ, ռուսներ, հայեր, կաթոլիկներ, յոյներ, հրէաներ և ուրիշ եւրոպացի ազգեր։ Ցեղացի համազգիները աւելի անդործունէութեան են մատնված, իսկ միւս եկուոր ազգերն աւելի գործի են դակված։ Առհասարակ այս վերոյիշեալ ազգութիւններից որը վեր առնենք ճանաչելու համար, թէ բնաւորութեամբ և թէ բարքով, դժուար է ճանաչել, այնքան ազդել են միմեանց վրա։ Իմ կարծիքով տեղացիները շատ հեռու են մնացել մարդկային ընդհանուր յատկութիւններից առհասարակ։ Եթէ հեռու չը գնանք, գոնէ մօտիկ հասարակական երևոյթներից սկսենք. դեռ նորերումս էր, որ հայրը որդուն էր խաբում և որդին հօրը։ Ցեղական բանկային կառավարչի ընտրութեան գործերում, որի պայքարը անց ուղիղ մի տարի, նոյն երևոյթը պատահեց։ Այս մոռացված բանը ինձ յիշեցրեց երէկվայ տեղական արհեստաւորաց վարչութեան ընտրութեան գործը, որը երկպառակութեան խնձոր է դարձել. ահա ուղիղ մի տարի է, որ կընտրեն արհեստաւորաց աւագին և անթիւ բողոքներով դարձեալ ապօրինի կը համարեն։ Այս շաբթին եղաւ դարձեալ նոր ընտրութիւնը. սոյն օրը երբ ես նայեցի տեղական արհեստաւորաց ընտրութեան քուէարկութեան գործին, (որոնք բաղկացած են 31 էնսաֆութիւններից), նրանց աղաղակը փողոցում անցնողների ականջներն էր խլացնում, և այդ գոռում-գոչիւնը առաւօտից մինչև երեկոյեան ժամի 5-ը տևեց. վերջապէս ընտրել են մէկին և ինչպէս ասում են դարձեալ դժգոհ են իրանց ընտրութիւնից։ Դարձեալ՝ եթէ ներս դնանք և նայենք տեղական դատաստանատները, կը տեսնենք, որ ամեն օր չնչին գանգատներով լի են, այնպէս որ ամեն մէկը մի-մի «աբլակատ» է դարձել։ Ընթերցողը այժմս կարող է մի որոշ եզրակացութիւն կազմել, թէ տեղական ինտելիգենտ և թէ ռամիկ դասի բարք ու վարքերի մասին։

Շուտով կը լինի մեր քաղաքային ինքնավարութեան իրաւասուների, անդամների և քաղաքագլխի նոր ընտրութիւն։ Տեսնենք, այս փափուկ խնդրի մէջ ևս, ինչ գոյն կը տան տեղացի և եկուոր քուէարկողները։ Ի դէպ, մեր քաղաքը օրից օր յետ է գնում՝ թէ առողջապահական, թէ լուսաւորութեան և թէ նորամուտ սովորութիւնների գործերում։ Մեր գլխաւոր փողոցներով այժմս անցնելն անգամ դժուար է, ոչ թէ զբօսնելը. ոտների տակը ընկած են սատկած շան, կատուի և հաւերի լեշերը, թողնելով զանազան անմաքրութիւնները... Իսկ տեղացի հրէական արուարձանից այնպիսի ժահահոտութիւն է փչում, որ ձեզ մոռացնել կը տայ պարսկական կեղտոտ յետին քաղաքները։ Մեր կշեռքի և մթերանոցի մասին արդէն աւելորդ է խօսել. ինչ որ լաւ ու օգտակար պիտոյք է, այն արդէն ճանապարհին հանդիպած հրէայ չարչիի ձեռին է ընկած, հետևապէս նրանից պէտք է առնել կրկնապատիկ գնով մի և նոյն օրը։ Ցանկալի է, որ եկող տարվանից այս բոլոր պակասութիւնները թէ մեզանում և թէ ուրիշ տեղերում իսպառ վերանան, որպէս զի այսպիսի գանգատները մամուլի բերանով չը յայտնվեն։

Այստեղ ներկայ տարվայ զինուորագրութեան գործը վերջանալու վրա է. թէև զինուորակոչութիւնը սովորութիւն դարձաւ իմերէլ ազգի համար, բայց մի չնչին անօգուտ սովորութիւն է մտել. հէնց առաջին զինուորագրութիւնից ում որ քուէ ընկաւ և զինուոր դարձաւ, կարծում է թէ ամեն բանից հրաժարվում է և նոյն օրն ուղղակի •պատերազմի դաշտն է գնում. սրանք խումբ-խումբ բաժանվում են և օրերով հարբած՝ երգելով փողոցներն են չափչփում կամ կառքերով արշաւում այս ու այն կողմը. սա պէտք է արգելվի, որպէս զի գոնէ քաղաքը ցերեկով հանդիստ լինի։

Ցեղացի մանր վաճառական և պարազիտ անհատները լսելով՝ որ Ռուսաստանում սով է, արդէն սկսել են եգիպտացորենի առևտուրը, որ հաւաքում են թէ գիւղերում և թէ քաղաքներում։ Իմերէթը չատ հարուստ է եգիպտացորենով. այս տարի չատ և չատ առատ էր, նոյն իսկ Քութայիսում կարելի է պուդը 30 կոպէկով առնել։ Իսկ զինին չատ սակաւ էր. արդէն Գէլեվսկու և Նովոսելսկու տուած տեղեկութիւններից երևում է, որ ամբողջ Իմերէթի խաղողի վազերը վարակված են միլդիում և օիդիում հիւանդութիւններով, իմ աչքովս տեսնում էի իմ կացած տանը, որ այնքան սաստիկ բեռնաւորված ողկոյզներով խաղողի վազը օգոստոսի կիսին բոլորովին չորացաւ և նոյն իսկ զոխը չըմշկվեց։ Կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան պարտականութիւնն է, կարճ, հասկանալի և պարզ ոճով տեղական բոլոր լեզուներով տպել տալ բրոշիւրներ այդ հիւանդութիւնների մասին և բաժանել տեղական քահանաներին, վարժապետներին և գիւղացիներին, մատնացոյց անելով դեղերի և միջոցների վրա։

Հ.

ՆՈՒՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

Յայտարարութիւնների չատութեան պատճառով «Մշակի» ներկայ, 142-որդ համարը հրատարակում ենք 6 երեսից բաղկացած։

Ընթերցողները գիտեն արդէն որ մեր բանաստեղծ Սմբատ Շահ-Ազիզ, առել է «Էվէլինա» վէպից 30 օրինակ, խնդրելով որ ձրիապէս տարածենք այդ օրինակները մեր կամքին համեմատ։ Մենք արդէն տարածեցինք մեր բանաստեղծի անունից այդ վէպի 30 օրինակը թէ Ռուսաստանի և թէ արտասահմանի հայ ուսանողութեան մէջ, ուղարկեցինք մի քանի հասարակաց և դպրոցական գրադարաններին թէ արտասահմանում և թէ Ռուսաստանում ու Անդրկովկասում։ Այժմ ստացանք պ. Շահ-Ազիզից մի երկրորդ նամակ, որի մէջ նա յայտնում է թէ կրկին առնում է այդ վէպից 20 օրինակ (ուրեմն ընդամենը 50 օրինակ) նորից խնդրելով մեզ տարածել վէպը, որտեղ յարմար կը համարենք։ Մեր բանաստեղծը իր նամակի վերջում աւելացնում է. «Թող այդ գեղեցիկ գիրքը տարածվի ազգի մէջ և պատրաստէ այն անկաշառ, անձնուէր, հասարակաց շահերին անձնազոհ երիտասարդներին, որոնց տիպը նկարագրված է գրքի վերջին էջերում։»

—

ԲԱԹՈՒՄԻ հայ թատերասէրները, ինչպէս մեզ գրում են, նոյեմբերի 30-ին յօգուտ տեղական հայոց երկսեռ ուսումնարանների խաղացին «Թուղթ խաղացողի կեանքը» պիէսան. ներկայացումը աջող անցաւ։ Օր. Սահառունի և Կարինեան, նոյնպէս պ. Համբարձումեան չատ գեղեցիկ կերպով խաղացին։ Մուտքը 500 ռուբլի էր, զուտ արդիւնք մնաց 300 ր. պատրաստվում են ամսիս 21-ին խաղալու Թուրքերէն «Բաջի վէ Ղարդաշ» պիէսան, ոչ որպէս 1 գործողութեամբ վոդէվիլ, ինչպէս կրճատած խաղում է պ. Սաֆիրաղեան, այլ ամբողջ 3 գործողութեամբ։ Սաֆիրաղեանի դերը կատարում է պ. Աբել Ապրէսեան։ Խաղը բարեգործական ընկերութեան Բաթումի ճիւղի օգտին է։

—

«Հրատարակչական ընկերութեան» ծախսով լոյս տեսաւ Ց. Պարոնեանի «Ազգային ջոջեր» նշանաւոր աշխատութիւնը երկրորդ տպագրութեամբ։ «Ազգային ջոջերը» այնքան յայտնի է, որ նրա մասին նորից խօսելը աւելորդ ենք համարում։ Գիրքը մի բաւական մեծ հատոր է, բաղկացած 380 երեսից. այս մի հատորի մէջ ամփոփված են Պարոնեանի հրատարակած երեք հատորներն էլ։ Այդ հատորի մէջ մտնել են բոլոր «ջոջերը», բացի մի կենսագրութիւնից, (այն է պ. Գրիգոր Արծրունու կենսագրութիւնը)։ Չենք կարող չը նկատել, որ «Ազգային ջոջերի» տպագրութիւնը կատարված է բաւական անհոգ կերպով. մի տեղ տպագրված է առանց շրջոնի, միւս տեղ չրջոնով (երես 237—239), մի տեղ տպագրված է ցիցերո, միւս տեղ կօրպուս ասված տառերով (երես 15), մի տեղ տպված է՝ Բաբաղեան, միւս տեղ Փափազեան։ Իսկ կէտադրութիւնը գրքի մէջ այնքան անհոգութեամբ է պահպանված, որ խօսել անգամ չարժէ։ «Ազգային ջոջերի» նման գիրքը, այն էլ «Հրատարակչական ընկերութեան» անունով տպված,—հարկաւոր էր, որ աւելի խնամքով և աւելի հոգատարութեամբ լոյս ընծայվէր։

—

Երեքշաբթի, ամսիս 10-ին, Թիֆլիսի Աղբունական թատրոնում ռուսաց դերասանական խումբը երրորդ անգամ ներկայացրեց «Ռուի-Բլազ» դրամա, «Ксенія и Лжедимитрій» դրամայի տեղ, որը անակնկալ պատճառով յետաձգվեց։ Դերասանական խումբը չը վնասվեց թատրոնի դատարկութիւնից և աջող կերպով կատարեց պիէսան։ Պ.պ. Գրօմով, Ֆօրկատի և Վոլսկի բուռն ծափահարութիւններով վարձատրվեցան։ Գրօմով ստացաւ մի արծաթեայ ծխախոտատուփ։

—

Պարսկաստանի ԹԵՀՐԱՆ քաղաքից մեզ ուղարկված է հետևեալը տպագրելու համար. «Ամենայն յարգանօք կը խնդրենք ձեզանից, որ հաճիք հետևեալ ծանուցումն զետեղել ձեր պատուական «Մշակ» լրագրի մէջ, ի գիտութիւն ընդհանուր պարսկահայոց։ «Բաֆֆի» ընկերութիւն նպատակ ունենալով ընթերցասիրութիւնը ծաւալել թէ քաղաքիս և թէ Պարսկաստանի այլ քաղաքներում բնակվող ազգայնոց մէջ, և նկատելով որ Կովկասից կամ Ռուսաստանից և այլ երկիրներից ազգային թերթեր կամ ամեն տեսակ նոր հեղինակութիւններ բերել տալու համար մեծ դժուարութիւններ են հանդիպում, ուստի այդպիսի գործը դիւրացնելու համար, ընկերութիւնս ծանուցանում է պարսկաբնակ ամեն ազգայնոց, որ երբ որ կուզեն մի ազգային թերթի բաժանորդ գրվել և կամ մի նոր հրատարակված գիրք բերել տալ, կարող են դիմել «Բաֆֆի» ընկերութեան, զրկելով նրան իրանց ուզեցածի գինը. ընկերութիւնը պատրաստ է կատարել նրանց խնդիրը և չուտով բերել տալ նրանց ուզածը։ Լրագիրների և գրքերի գներն իրանց խմբագիրներին և հեղինակներին հասցնելու համար, ընկերութիւնը դումարները կը զրկէ Թիֆլիսի կենտրոնական գրավաճառանոցին, և միշտ նրա հետ հաշիւ պիտի ունենայ։»

—

Մոսկվաբնակ ժամարեան եղբայրները ի-

րանք գրվելով «Մշակի» երկու օրինակին, մի և նոյն ժամանակ ուղարկեցին մեզ դարձեալ 30 ռուբլի, խնդրելով որ այդ փողով ուղարկենք մեր լրագրի 3 օրինակ. 1) Շուշու հայոց բարեգործական ընկերութեան դրադարանին, 2) Շուշու թեմական դպրանոցին և 3) Շուշու Ս. Մարիամեան իգական ուսումնարանին:

—

Դանի մի ժամանակ առաջ լուր կար, որ ՔՈԻԹԱՅԻՍՈՒՄ պէտք է հիմնվի մի գիւղատնտեսական ուսումնարան, գործնական մասնաճիւղով. սակայն մինչև այժմ քուԹայիսեցիք անհամբեր սպասում են այդ ուսումնարանի բացվելուն, իսկ նրա բացվելու վերաբերմամբ ամենաԹոյլ նշաններ էլ չեն տեսնվում:

—

Մեզ գրում են ՔՈԻԹԱՅԻՍԻՑ հետևեալը. «Օլդենբուրգեան պրինցը արդէն երեք տարի է, որ ՔուԹայիսում կառուցած ունի ֆրանսիական սրբ ու կարգով զինեգործարան, ուր տարեկան հաղարաւոր չիշ Թանգագին զինիներ են պատրաստվում, մանաւանդ շամպանեան գինու յատկութիւն ունեցող փրփրող զինիներ, որոնք մեծ քանակութեամբ արտահանվում են ԹէՄեր երկրի այլ և այլ քաղաքներ, ԹէՌուսաստան և ԹէՎերջապէս արտասահման: Ցանկալի է, որ Երևանի, Գանձակի ու Մաղրասի հարուստ հայ այգեպէրերն ու կապիտալիստները ՔուԹայիսի շամպանեան գինու գործարանը տեսնէին և իրանք էլ ձեռնարկէին նոյն գործին, չը սպասելով որ օտարները գային ու սկսէին գործը»:

—

«Հայրենիք» անունով պիէսան, որը մի երկու տարի ընդհատումից յետոյ այս օրերս նորից թոյլատրվեց ներկայացվելու Թիֆլիսի վրայ բեմի վրա, բաւական աջողութիւն ունեցաւ և լաւ ընդունելութիւն գտաւ հասարակութեան կողմից: Կրկնում ենք, որ այդ պիէսայի ներկայացնելը հայոց բեմի վրա ևս ցանկալի է:

—

Մեզ տեղեկացնում են, որ ԲԱԳՈՒԻ ինտելիգենցիայի շրջանում միտք է յղացել կազմելու մի հաստատուն խումբ՝ հայերէն ներկայացումներ տալու համար: Լաւ միտք է, միայն ԹէԻրագործվի:

—

ԵՐԵՒԱՆԻ թեմական դպրոցը նիւթական կողմից անապահով դրութեան մէջ է: Ցանկալի է, որ էջմիածնի սինոդը միջոցներ ձեռք առնէր այսպէս ԹէԱյնպէս ապահովացնելու անագին թեմի այդ միակ դպրանոցը:

—

Մեզ հաղորդում են, որ պ. Կարա-Մուրզա մըտադիր է իր նոր երգեցիկ խմբով, որը բաղկացած է երկու սեռի մօտ 100 անձինքներից, Ինդեան տօներին գալ Թիֆլիս և մի կոնցերտ տալ: Դրանով մեր յարգելի խմբապետը երաժշտական մեծ զուարճութիւն կը պատճառէ Թիֆլիսի հասարակութեան: Սակայն Կարա-Մուրզա ահագին ծախս կունենայ մեզ մօտ գալու համար և դրա համար մի որ և է ապահովութիւն պէտք է ունենայ: Ուրեմն ցանկալի է, որ իր խումբը մեզ մօտ բերելուց առաջ, Թիֆլիսում աբօնեմենտ բացվի Կարա-Մուրզայի կոնցերտի համար:

—

ՄԵՂՐԻ գիւղից մեզ գրում են. «Տեղիս հայոց դպրոցը գոհացուցիչ վիճակի մէջ է: Նա այժմ արդէն մի տեսակ կենտրոնական դպրոց է շրջակայ գիւղերի համար, և ցանկալի է, որ այդ գիւղերը մեծ քանակութեամբ աշակերտներ ուղարկեն Մեղրիի դպրոցը: Այս տարի տղայոց դպրոցին կից բացված է և օրիորդաց դպրոց, որը պէտք է յաջորդաբար բանայ նոր-նոր բաժանմունքներ: Վարժուհու պաշտօնը վարում են տեղացիք,—այն է օրիորդ Մալումեան, այժմ տիկին Դանիէլեան, և տիկին Վաչեանց: Ուրախալի երևոյթ է, որ ԹէՕրիորդաց և ԹէՏղայոց դպրոցի դասատուները բոլորն էլ տեղացիք են, բացի մէկից: ԵԹէ ճշմարիտ, մեր գիւղերի դպրոցների վարժապետները հէնց նոյն գիւղացի ուսում առած երիտասարդները լինեն,—դա մի կատարեալ բաղդ կը լինի մեր գիւղերի համար»:

—

ԶԱՆԳԵԶՈՒՐԻՑ մեզ գրում են. «Նոյեմբերի 18-ին Մեղրիի մասի հաշտարար դատաւորը եկաւ Մեղրի: Դա մի համակրելի երիտասարդ մարդ է, Բայկով ազգանունով: Նա Մեղրիում վճռեց 51 գործեր, մեծ մասը անտառային գործեր, և վճռեց յօգուտ ժողովրդի: Այն օրվանից, երբ Մեղրիի մահալը բաժանվել է Նախիջևանի գաւառից և միացվել Զանգեզուրի գաւառին, այն օրից մինչև այժմ առաջին անգամն է, որ դատաւորը ինքը գալիս է Մեղրի, որպէս զի ժողովրդին նեղութիւն չը պատճառէ՝ գիւղացիներին տանելով Գորիս կամ Հանքը: Ժողովուրդը սիրով ընդունեց հաշտարար դատաւորին և սիրով էլ բաժանվեց նրանից:»

—

Դեկտեմբերի 12-ին հայոց դերասանական խումբը ներկայացրեց ԹԻՖԼԻՍԻ Արքունական թատրոնում Շիրվանզադէի պիէսան «Իշխանուհի» անունով: Թատրոնը գրեթէ լի էր: Ժողովուրդը բաւական ծափահարեց դերասաններին և մի քանի անգամ նոյն իսկ բեմ կանչեց հեղինակին: Մեր քննադատութիւնը այդ պիէսայի մասին կը տպենք «Մշակի» յաջորդ համարում:

—

Լոյս տեսաւ Մոսկվայում ֆրանսերէնից հայերէն թարգմանած Ժորժ Օնէի «Դոկտոր Ռաբօ» (ինչի Ռաբօ և ոչ Բաբօ): Գիրքը, որը թարգմանել է Մ. Խանդամիրեանց, բաղկացած է 375 երեսից և արժէ 80 կոպէկ: Պոստային ծախսով 1 ռուբլի:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՄԱՐ ՓՈՂ Է ՀԱՐԿԱՒՈՐ

Պարիզի ֆինանսական օրգան «La Coulisse» լրագիրը մի հետաքրքիր յօդուած տպեց, որով ապացուցանում է ԹէԵրեքպետեան դաշնակցութիւնը չէ կարող պատերազմ սկսել, որովհետև նրան պակասում է փողը:

«Պատերազմը,—ասում է վերոյիշեալ օրգանը,—անհնարին է ԹՎում մեզ այն պարզ պատճառով, որ բոլոր պետութիւններին, բացի Ռուսաստանից և, մանաւանդ, Ֆրանսիայից, կը պակասի փողը, համարեա իսկոյն պատերազմ սկսելուց յետոյ:

Ամենավերջին տեղեկութիւններին համեմատ, եւրոպական մեծ պետութիւնների զօրքերի Թիւը հետևեալ Թւանշաններ են ներկայացնում. Աւստրո-Ունգարիան կարող է 3 միլիոն զօրք ուղարկել պատերազմի դաշտը, Իտալիան—3 միլիոն, Գերմանիան—6 միլիոն 400,000. միւս կողմից, Ռուսաստանը—6 միլիոն 500,000, Ֆրանսիան—6 միլիոն:

Պատերազմ վարելու համար ազգային բանկերում պահված մետալական ֆոնդի գումարը հասնում է՝ Աւստրիայում մօտ 550 միլիոնի, Իտալիայում մօտ 200 միլիոնի և Գերմանիայում մօտ մի միլիարդի (հազար միլիոն), մտցնելով այդ Թիւի մէջ 150 միլիոն ոսկով յատուկ պատերազմական ֆոնդը, որ յետ է ձգված այն 5 միլիարդից, որ 1872 Թուին Ֆրանսիան վճարեց Գերմանիային իր երկրից գերմանական զօրքերը հեռացնելու համար:

Ռուսաստանը, բացի մօտ մի միլիարդին հասնող իր սովորական եկամուտներից, ունի յատուկ պատերազմական ֆոնդ, որը ոսկով մի միլիարդ ֆրանկին է հասնում: Ֆրանսիական պետական բանկը ունի 2 միլիարդ 600 միլիոն ազատ դրամագլուխ:

Ուշադրութեան առնելով պատերազմի ժամանակ իւրաքանչիւր զինուորի համար լինելի ծախսը, պատերազմ սկսվելուց մետալական ֆոնդերը կը ցամաքեն զանազան պետութիւններում: Իտալիան կը մնանկանայ, հէնց որ դուրս կը գայ պատերազմի դաշտը: Աւստրիային կը բաւեն իր դրամական միջոցները միայն ութ օրվայ համար:

Չը պէտք է մոռանալ մի և նոյն ժամանակ և այն, որ պատերազմ սկսելու դէպքում, առևտուրը միանգամից կը դադարի, որովհետև զէնք կրելու ընդունակ բոլոր մարդիկ կը մտնեն զօրքերի շարքը: Պետական եկամուտները, որոնք կազմվում են հարկերից, մաքսահարկերից և այլ տուրքերից, անյապաղ կընդհատվին: Այդպիսով պատերազմը երեքպետեան դաշնակցութեան ֆինանսական մնանկութեան պատճառ կը դառնայ: Նրանց մնանկութիւն է սպառնում մինչև անգամ յաղթութեան դէպքում, որը մեզ ֆիզիկապէս անհնարին է ԹՎում:»

ԻՐԼԱՆԴԱԿԱՆ ԿՂԵՐԸ ԵՒ ԳԼԱԴՍՏՕՆ

Իրլանդական ինքնավարութեան գաղափարը, որն առժամանակ կարծես խախտված էր Պարնելի կուսակցութեան անկման պատճառով, այժմ նորից իր առաջվայ ոյժն է ստանում և իրլանդական ազգային կուսակցութեան չափաւոր մասի դաշնակցութիւնը անգլիական ազատամիտ կուսակցութեան հետ՝ կարելի է կատարված իրողութիւն համարել: Անգլիական պահպանողական կուսակցութիւնը յոյս ունէր, որ պարնէլեան կուսակցութեան կրած պարտութիւնից յետոյ անգլիական ազատամիտները այլ ևս չեն միանայ կամ գոնէ երկար ժամանակ կը յապաղեն միանալու՝ իրլանդական ազգային չափաւորների հետ: Սակայն Գլադստոն Բիրկընհիդում նորերումս իր արտասանած ատենաբանութեան մէջ դրականապէս յայտարարեց, որ Իրլանդիայի home rule (ինքնավարութիւնը) անգլիական ազատամիտ կուսակցութեան քաղաքական պրօգրամի անբաժան մի մասն է կազմում:

Այդպիսով, մի կողմից չարունակելով անողորմ պատերազմ մղելու անգլիական պահպանողական կուսակցութեան և Սալսբրիի մինիստրութեան դէմ, միւս կողմից մաքառելով իրլանդական ծայրահեղ արմատական կուսակցութեան դէմ, անգլիական ազատամիտ կուսակցութիւնը, Գլադստոնի ղեկավարութեամբ, ձեռք է մեկնում իրլանդական ազգային չափաւոր կուսակցութեանը, որը ղեկավարվում է Իրլանդիայի կղերի ձեռքով: Այդպիսով մենք ականատես ենք լինում մի տարօրինակ երևոյթի. Գլադստոնի և նրա կուսակցութեան ամենահաւատարիմ կուսակիցները Իրլանդիայում դառնում են այժմ իրլանդական հոգևորականները:

Սալսբրիի և պահպանողականների տենչացած գաղափարն էր միշտ կոտրել իրլանդական հոգևորականութեան ոյժը. նոր հողային օրէնքի նախագիծն էլ կողմնակի կերպով ունէր իրլանդական կղերի ոյժը ջլատելու նպատակը: Սակայն իրլանդական հոգևորականութիւնը մի կողմից հալածված լինելով անգլիական կառավարութիւնից, իսկ միւս կողմից իրլանդական արմատական կուսակցութիւնից, աւելի էլ սկսեց պահանջ դրել մի նոր և զօրեղ դաշնակցի: Իսկ անգլիական գլադստոնեան կուսակցութեան համար իրլանդական կղերի բարեկամութիւնը, որն իրլանդական ազգային չափաւոր կուսակցութեան պարագլուխ է հանդիսանում, գոնէ եԹէ ոչ սկզբունքով, գործնականապէս այս րոպէիս մի քաղաքական անհրաժեշտութիւն է կազմում: Այդ դաշնակցութիւնը կը կրկնապատկէ այն եռանդը, որով ապագայ ընտրողական պայքարում իրլանդացիների մեծամասնութիւնը կը գործէ յօգուտ գլադստոնեան կուսակցութեան և գլադստոնեան կանդիդատների:

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԸ

Արտասահմանի հայոց լրագիրներում կարդում ենք,

«Մի հնդկահայ, պ. Մ. Աբգար, որ հայերէն լեզուի ուսումը և հայրենասիրական զգացումներ մեր հնդկաբնակ հայրենակիցների մէջ տարածելու համար բաւական ժամանակէ ի վեր եռանդով ջանքեր կանէր, այժմ ալ իր անձնական հաշուոյ քսակէն 600 ֆրանկի դրամագլուխը յատկացուցած է հայերէն գրքերի փոքր գրավաճառանոց մը հաստատելու, որպէս զի այդ միջոցով հայերէն գիրքեր և լրագիրներ տարածէ իր հընդկաբնակ հայրենակիցների մէջ. գրքերի վաճառման շահը գրավաճառանոցը աւելի ևս զարգացնելու պիտի յանկանայ: Տիար Մ. Աբգարի այս ջանքերի աջակից գտնուած է նաև Տիար Մեսրոպը Յ. Սէթ, որ յանձնառու եղած է նաև հայերէնի դասեր տալու հայ երիտասարդների և օրիորդների, որոնք անգլիական լեզուի ազդեցութեան տակ հետզհետէ մոռցած են հայերէնը:»

«Կալկաթայի հայերի քահանայ Տ. Յովհաննէս Խաչկեան, որ հայ եկեղեցու ջանասէր, նախանձախնդիր քահանայներէն մին եղած է և իր ծերութեան (84-ամեայ) հասակին մէջ իսկ չը դադրիր ժողովուրդը հովուելէ, այս վերջերս 200 անգլիական ոսկի նուիրած է «Համաբարբառ ցանկի Հին և Նոր Կտակարանի»-ին տպագրութեան ծախքին համար»:

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒՐՔԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Վանից գրում են.

«Մի քիչ մեղմացան քաղաքիս կրքոտ և վնասակար կուսակցութիւններ, զի այն քանի մ'անձինք որք տարիներէ ի վեր Վանայ ժողովրդեան տունը քանդեցին, այժմ ընկճուած են և երես չունին ոչ կառավարութեան և ոչ էլ հասարակութեան քով: Ժողովուրդն այդ չարերէն ու չարիքներէն մի քիչ ազատած՝ ահա կը սկսի իր գաւառային գործերու կարգադրութիւն: Բայց պաշտօնի գլուխը գտնուողներն ստէպ և ամեն երկրի մէջ գրեթէ չեն կրնար հասարակութեան քայլերով վաղել, այսպէս էլ այժմ մեր պատրիարքարանի Յովսէփ վարդապետը յետամնաց կը լինի և չուտով չը ձեռնարկեր վերակազմել ընդհանուր ժողովը, վարչութիւնն և թաղ. խորհուրդներն որք ամենքն էլ չնորհիւ վերոյիշեալ կուսակցութեանց՝ քայքայուն, անգոյ և կամ ազգին վնասակար անձինքներէ բաղկացեալ էին:»

Կ. Պոլսից հաղորդում են, որ պատրիարքարանը Կ. Պոլիս է կանչել պարսից սահմանագլխի մօտ գտնվող Ս. Բարթուղիմէոս վանքի Յովհաննէս վարդապետ Բղնունին, բայց վարդապետը ականջ չէ դնում իշխանութեան հրամանին:

«Հայրենիք» լրագիրը հաղորդում է. «Քարբերդէն կը գրեն մեզ Թէ տեղւոյն կրթական ժողովին տեղեկագրութեան վրա, Կրթական գործոց նախարարութիւնն արտօներ է գաւառին խատիէ պետական վարժարանին մէջ հայերէն լեզուի ուսուցումն և հայերէնի ուսուցիչ կարգուեր է Յովհաննէս էֆէնտի Եաղրճեան»:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Լրագիրներին Բերլինից հեռագրում են, որ գերմանական սոցիալիստները դիմել են կառավարութեանը մի յայտագրով, որի մէջ խնդրում են վերացնել հացի վրա դրված մաքսահարկը:

—Լօնդօնից հեռագրում են հետևեալը դեկտեմբերի 5-ին (17-ին): «Արևելեան Զինաստանից կրկին տեղեկութիւններ են ստացված, որ այնտեղի ազգաբնակութիւնը կոտորել է միսիոնարներին:»

—Պարիզի «Temps» լրագրին Սոֆիայից հեռագրում են հետևեալը. «Այժմ այստեղ ամենքի խօսակցութեան առարկայ են բուլգարական նոր կտրած դրամները, իշխան Ֆերդինանդի պատկերով: Բ. Դուռը երկար ժամանակ իր բարձրագոյն իրաւունքների խախտումն էր համարում այդ. բուլգարական կառավարութեան այդ քայլը մի և նոյն ժամանակ Բերլինի դաշնագրի օդուն հակառակ էր: Սակայն, որպէս յաճախ պատահում է Կ. Պոլսում, Թիւրքաց կառավարութեան տրամադրութեան մէջ յանկարծ մի անսպասելի փոփոխութիւն տեղի ունեցաւ: Բ. Դուռը, պաշտօնապէս Թոյլատուութիւն չը տալով, դադարեց այդ դրամների հրատարակմանը դիմադրելուց: Ստամբուլով ժողովի անդամներից շատերին յայտնեց, Թէ այդ վաստի մէջ մի նոր քայլ է տեսնում Բուլգարիայի կատարեալ անկախութիւնը հրատարակելու համար: Բուլգարական ազգային ժողովի նախագահի խօսքերով, հազիւ կարողացան համոզել Բ. Դրանը՝ Աւստրիայի, Անգլիայի և Իտալիայի օգնութեան չնորհով:

—«Figaro» լրագիրը հաղորդում է. «Վաղուց է արդէն, որ ոչինչ չէ լսվում գերմանական Վիլհելմ կայսրի ճանապարհորդութեան մասին: Այժմ իմացվեց, որ գերմանական կայսրը դեռ ևս չէ աւարտել իր ճանապարհորդութիւնը: Եկող տարի, մարտի 2-ին, Վիլհելմ II կերթայ Վիեննա: Այնտեղից նա ճանապարհ կընկնի Բուխարէստ, ուր երեք օր կը մնայ Կարլ Թագաւորի մօտ: Բուխարէստից կայսրը կուղևորվի դէպի Սինայ և Եաստա, որտեղից Զերնովիցի, Լվովի և Բրէսլավլի միջով կը վերադառնայ Բերլին:»

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

«Հանդէս Ամսօրեայի» մէջ կարդում ենք հետևեալը.

«Ազգիս նշանաւոր Ազնուականներէն՝ Ա. Խ. Զունդ Ասպետն իր Վեհափառ Ինքնակալին Աւստրիոյ Փրանկիսկոս-Յովսէփ Ա. կայսեր կողմէն յատուկ Ազնուականութեան տիտղոսաւ պատուեալ, և այլ և այլ առիթներով ասպետական բարձր կարգերու շքանշաններով զարդարեալ, վերջին օրերս ի մայրաքաղաքս Վիեննա գտնուելուն կը բաղձար իւր հպատակութեան և խորին երախտագիտութեան ցոյցերն անձամբ իւր Վեհապետին ուղը դնել, որով անցեալ նոյեմբեր ամսոյ 23-ին առաւօտը նորին կայսերական վեհափառութեան ներկայանալու պատիւն ունեցաւ: Բաւական երկար զեղեցիկ ճառով իւր չնորհակալութիւնը յայտնեց Կայսրմէ իւր անձին առատաձեռնուած այնչափ պատուաբեր չնորհաց համար. և իւր գործառնութեանց ասպարիզին նկատմամբ տեղեկութիւն տուաւ: Վեհափառ Կայսրն երբէք երբէք խօսքը կընդհատէր սիրալիր քաջալերական

պատասխանով մը կամ հարցմամբ մը։ Ասպետը պատշաճաւոր պատասխանովն իմացընելէն ետև՝ թէ իր ծննդավայրն ի Պուքովինա՝ Սուչավա քաղաքն է, իր յԱրևելս և մանաւանդ ի Կոստանդնուպօլիս վարած բաղմամեայ յարատև գործունէութիւն կը յիշատակէ, և թէ հիմայ առևտրական աղմկալից գործերէ քաշուած մարդասիրական, հայրենասիրական և գիտնական ասպարէզի վրայ կը զբաղի. և թէ այս պատճառաւ շատ մ'ընկերութեանց գլուխ կամ անդամ ընտրուած է։ Նորին վեհափառութիւնն իր գոհունակութիւնն յայտնելէն և զհայազգի Ասպետն յորդորելէն վերջը որ իր հայրենասիրական գործերը շարունակէ յօգուտ Կ. Պոլսոյ աւստրիական գաղթականութեան, հաճեցաւ ունկնդրութիւնը այս նշանաւոր խօսքերով փակել. «Եւ ես ի նշան կայսերական գոհութեան ահա բարեկամաբար ձեռքս կուտամ ձեզի»։ Ասպետն Զուանդ այժմ պատգամաւոր է Կ. Պոլսոյ Աւստրիացւոց Հիւպատոսական հասարակութեան, Անդամ վաճառականութեան սենեկին, Դատաւոր յՕսմանեան խառն ատենի և աւստրիական գործակալ ի տեսչութեան մենաշնորհի։ Պատուեալ յաւստրիական պետութենէն Փրանկ—Յոսէփեան շքանշանովն և Երկաթի թագի ասպետութեան երրորդ կարգի շքանշանաւ։»

* * *

Բելգիայի Բրիւսէլ քաղաքում հրատարակվող «Le Nord» շաբաթաթերթի խմբագիր, պ. Թէոֆիլ Ֆրանսեզկի այս օրերս վախճանվեց։ Հանգուցեալը 59 տարեկան էր և 1864 թվից սկսած խմբագրում էր լրագիրը։

* * *

Արևելագէտների միջազգային կօնգրէսը կը գումարվի Սեվիլիում 1892 թվին, սեպտեմբերի 17-ից մինչև սեպտեմբերի 30 (դեկտեմբերի 12) դօն-Անտոնիո կանովաս-դէլ-կաստիլիօի նախագահութեամբ, որը մինիստրների խորհրդի նախագահ և Մադրիդի արքայական պատմական ակադէմիայի դիրեկտոր է։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.

ՀԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 դեկտեմբերի։ «Կարմիր-խաչի» ընկերութիւնը սովեալներին օգնելու համար մինչև դեկտեմբերի մէկը ստացել է 1,333,475 ռուբլի, նահանգական հոգաբարձութիւնները ստացել են՝ 130,000 պուդ հացահատիկ, 20,000 պուդ էլ ճանապարհ է գցված։ «Но. Время» լրագիրը հաղորդում է, որ վճռված է հասարակական աշխատանքները բաժանել՝ տեղական և ընդհանուր—պետական, և որովհետև վերջին տեսակի աշխատանքները պահանջում են մի ընդհանուր յատակագիծ, այդ պատճառով ենթադրութիւնները սահմանափակվում են առ այժմ տեղական աշխատանքներով, որի համար հարկաւոր է տալ 10 միլիոն ռուբլի՝ արդէն որոշված 30 միլիոնից։ Աշխատանքների կատարել տալը յանձնված է տեղական իշխանութիւններին։ Զեմստվոների և ուրիշ օգտաւէտ գործիչների օգնութեամբ կը կազմակերպվեն բանուորական արտելներ՝ յայտնի կալուածատէրերի հսկողութեան ներքոյ։ Մասնաժողովի կարգադրութեան ներքոյ գտնվող անձինք կը հսկեն բանուորական գործի վրա։—Երէկ մինիստրական մասնաժողովի մէջ՝ որոշվեց մի առաջարկութիւն՝ թոյլ տալու Սև և Ազովեան ծովերում օտար նաւերին տեղափոխելու 40 միլիոն ռուբլու հացահատիկ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 դեկտեմբերի։ Տեղի վրա՝ հանգանակութիւններ հաւաքող և բաժանող հիմնարկութիւնների գործունէութիւնը միացնելու համար, առանձին մասնաժողովը մտադիր է նահանգական քաղաքներում այդ բարեգործական հիմնարկութիւնները միացնել և կազմել նահանգական մասնաժողով, որը լինի միջնորդ օղակ առանձին մասնաժողովի և տեղական գործադիր օրգանների մէջ։ Կենտրօնացումը չը պէտք է նահանգներում գործող ուրիշ հիմնարկութիւններին դժուարացնի հանգանակութիւններ անելու։ Եթէ նահանգական մասնաժողովի կազմելը անյարմար թվի, այն ժամանակ հարկաւոր է կազմել մի առանձին խորհուրդ, նահանգապետի նախագահութեամբ, բաղկացած թեմական առաջնորդից և զեմստվոյի վարչութեան նախագահից. իսկ այն տեղերում, ուր վերջինները չը կան, պէտք է մասնակցեն երկու ուրիշ անձինք, որոնց նշանակում է առանձին մասնաժողովը, նահանգապետի առաջադրութեամբ։ Բացի դրանից, մասնաժողովը, միանգամայն նպատակայարմար համարելով արգելել մասնաւոր անձանց հրաւէրներ տպագրելը, այնու ամենայնիւ, վերին աստիճանի ցանկալի է համարում այդ անձանց իր հետ ուղղակի յարաբերութեան մէջ լինելը։

ՏԵՂԵԿԱՑՈՅՑ

ԱՆԴՐԻՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Ճանապարհորդական գնացքներ Թիֆլիսի և Բաթումի մէջ.

№ 1

ԲԱԹՈՒՄԻՑ *մեկնում է* . . . . 9 *ժ.* 45 *ր. առաւ.*
ԹԻՖԼԻՍ *հասնում է* . . . . . 9 » 52 » *երեկ.*

№ 2

ԹԻՖԼԻՍԻՑ *մեկնում է* . . . . 9 *ժ.* 30 *ր. առաւ.*
ԲԱԹՈՒՄ *հասնում է* . . . . 9 » 45 » *երեկ.*

Պօստային գնացքներ Բաթումի և Բագուի մէջ.

№ 3

ԲԱԹՈՒՄԻՑ *մեկնում է* . . . . 11 *ժ.* 25 *ր. երեկ.*
ԹԻՖԼԻՍ *հասնում է* . . . . . 12 » 25 » *ցերեկ.*
ԹԻՖԼԻՍԻՑ *մեկնում է* . . . . 1 » 20 » *ցերեկ.*
ԲԱԳՈՒ *հասնում է* . . . . . 7 » 30 » *առաւ.*

№ 4

ԲԱԳՈՒԻՑ *մեկնում է* . . . . 11 *ժ.* 10 *ր. գիշեր.*
ԹԻՖԼԻՍ *հասնում է* . . . . 5 » 50 » *երեկ.*
ԹԻՖԼԻՍԻՑ *մեկնում է* . . . 6 » 50 » *երեկ.*
ԲԱԹՈՒՄ *հասնում է* . . . . 8 » 15 » *առաւ.*

Խառն գնացքներ Թիֆլիսի և Գանձակի մէջ

ԹԻՖԼԻՍԻՑ *մեկնում է* . . . 9 *ժ.* 20 *ր. երեկ.*
ԳԱՆՁԱԿ *հասնում է* . . . . 10 » 10 » *առաւ.*
ԳԱՆՁԱԿԻՑ *մեկնում է* . . . 7 » 35 » *երեկ.*
ԹԻՖԼԻՍ *հասնում է* . . . . 7 » 30 » *առաւ.*

—

ՌՈՒՍԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՇՈԳԵՆԱՒԵՐ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 8 *ժամին երեկոյեան, շրջական ըէյսով, Բաթումից դէպի Օդէսա.*

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 4 *ժամին երեկոյեան նմանապէս։*

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 7 *ժամին երեկոյեան, Բաթումից դէպի Կ. Պոլիս։*

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՐԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆՆ ՄԷՋ ԵՐԵՒԱՆՈՒՄ *ընդունում եմ բոլոր հայ և ռուս թերթերի համար բաժնորդագրութիւն եկող* 1892 *թ. համար՝ խմբագրական գներով։ Կարելի է ինձ մօտ տեսնել այդ թվի բոլոր հրատարակութիւնների պրեմիաները։*

1—2 *Սիրական Տէր-Մարտիրոսեանց*

ՓՈՐՁՎԱԾ ՈՒՍՈՒՑԻՉ

ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է ԱՇԱԿԵՐՏՆԵՐ ԵՒ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐ

գիմնազիաների և ռէալական դպրոցների համար։ Համաձայն է և կրկնութիւններ անել։ Հասցէն կարելի է իմանալ «Մշակի» խմբագրատանը։ 1—3

ГОРОДСКАЯ ПРОФЕССІОНАЛЬНАЯ МАСТЕРСКАЯ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻԳԱԿԱՆ ԱՐՀԵՍՏԱՆՈՑ

Հրաւիրում է մի անձն հաշուապահութիւնն Արհեստանոցում աւանդելու համար։

Յունվարին աշակերտների նոր ընդունելութիւն կը լինի։ Արհեստանոցը մտնել ցանկացողներին խնդրում են այժմեանից արդէն խնդիրը ներկայացնել։

Արհեստանոցը գտնվում է. Կաթոլիկաց և Միջի փողոցի անկիւնում, Դաւիթովի տանը։ 1—3

ՄԻ ՕՐԻՈՐԴ *ցանկանում է դասեր ունենալ* ԸՆՏԱՆԻՔՈՒՄ, *երեխաների հետ հայոց և ռուսաց լեզուներով պարապելով։*

Ցանկացողները կարող են դիմել «ՄՇԱԿԻ» խմբագրատունը։ 5—5

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Շոգենաւերի կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻՑ *դէպի* ԲԱԹՈՒՄ, *չորեքշաբթի օրերը, երկուշաբաթը մի անգամ, չորեքշաբթի* 25 *դեկտեմբերից* (6 *յունվարից*) *սկսած*

ԵՒ ՓՈԽԱԴԱՐՁ

Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզօն, Սամսօն, և Կ. Պոլիս։

ԲԱԹՈՒՄԻՑ ՇՈԳԵՆԱՒԵՐԸ ԴՈՒՐՍ ԵՆ ԳԱԼԻՍ

Չորեքշաբթի,	25 դեկտ. (6 *յունվարի*)	— ՄԻՆԳՐԷԼԻԱ	—	ԺԻԲՈՒԷՆ
—	8/20 *յունվարի*	— —	—	—
—	22 *յունվարի* (3 *փետրվ.*)	— —	—	—
—	5/17 *փետրվարի*	— —	—	—

ԵՒ այլն, երկու շաբաթ մի անգամ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ *օրերը, 4 ժամին կէսօրից յետոյ։ Ցօմանկների գները ուղղակի երթևեկութեան Բաթումից դէպի Պարիզ իսկական գնից պակսեցրած են։*

Տեղեկութիւնների համար ճանապարհորդների և բեռների մասին թող բարեհաճեն դիմել ընկերութեան ագէնտներին. ԲԱԹՈՒՄՈՒՄ *պ. Գարանիօնին, Նաբերէժնայա,* ԹԻՖԼԻՍՈՒՄ *պ. Վիկտոր դ'ԱՐՆՕԻՆ, Միջին-փողոցում, Նախկին գեներալ* Տէր-Աստուրովի *տանը,* ԲԱԳԻՈՒՄ, *Սամուէլ Դիլդարովին, Կոլիբիակինսկայա հրապարակ, և* ՆՈՎՐՕՍԻՑՍԿՈՒՄ *պ. Լուի Բլնօին։* 1—10 (*Ե. շ.*)

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԲԱՆԿԻ

31-ն Դեկտեմբերի 1891

ՊԱՀԱՆՋՔ	Թիֆլիսում	Բագուի և Բաթումի բաժն.	Ընդամենը
1. Դրամարկղ (առձեռն թղթադրամ)	151,480—94	174,392—74	325,873—68
2. Ընթացիկ հաշիւ Պետական Բանկ. բաժնում.	729,781—68	231,000 —	960,781—68
3. Զեղչումն (Disconto) *մուրհակաց երկու ստորագրութեամբ*	2,289,840—22	1,145,521—51	3,435,361—73
4. Զեղչ. *մուրհ. մի ստորագր. ապահ. ապրանք.*	— —	— —	— —
5. Զեղչումն տոկոսաբեր թղթ., *կտրօն. և այլն.*	12,607—22	6,604—88	19,212—10
6. Փոխառութիւն գրաւականով՝			
ա) Պետութիւնից ապահ. տոկոսաբ. թղթերի.	1,109,006—53	510,517 —	1,619,523—53
բ) » *ոչ ապահ.* » »	260,986 —	31,455 —	292,441 —
գ) *ապրանքների*	— —	74,988 —	74,988 —
դ) *Ոսկւոյ և արծաթի*	— —	46,320—73	46,320—73
7. Բանկի պատկանեալ տոկոսաբեր թղթեր.	612,455—23	46,806—39	659,261—62
8. Ոսկի և արտասահմանի փոխանակագրեր.	48,759—85	830—23	49,590—08
9. Թղթակիցներ՝			
ա) Նոցա հաշիւը (Loro)	9,092,167—07	— —	9,092,167—07
բ) Բանկի հաշիւը (Nostro)	7,643,273—61	— —	7,643,273—61
10. Բաժինների հաշիւը կենտր. վարչութեան հետ	585,305—04	— —	585,305—04
Կենտրօն. վարչութեան հաշիւը բաժինների հետ	— —	248,941—14	248,941—14
11. Բողոքուած մուրհակներ	24,799—35	1,000 —	25,799—35
12. Պայմանաժամը անցուցուած փոխառութիւններ	18,151 —	3,270 —	21,421 —
13. Ընթացիկ ծախսեր	47,938—76	27,917—21	75,855—97
14. Կահկարասիք և սկզբնական ծախսեր	2,761—94	3,314—50	6,076—44
15. Յետ ստացուելիք ծախսեր	15,136—43	26,612—17	41,748—60
Ր. Ա.	22,644,450—87	2,579,491—50	25,223,942—37

ՊԱՐՏՔ	Թիֆլիսում	Բագուի և Բաթումի բաժն.	Ընդամենը
1. Հիմնական դրամագլուխ	1,000,000 —	— —	1,000,000 —
2. Պահեստի դրամագլուխ	191,665—21	— —	191,665—21
3. Դրամական աւանդներ՝			
ա) Պայմանաժամով	2,836,897 —	465,974 —	3,302,871 —
բ) *ց'Պահանջ.*	356,862 —	32,710 —	389,572 —
գ) Ընթացիկ հաշուով հասարակ.	1,008,275—34	1,134,982—18	2,143,257—52
դ) » » *պայմանաւոր.*	— —	122,690—76	122,690—76
4. Փոխառումն պետ. բանկայի Թիֆլ. բաժն. ապահովված զեղչեալ մուրհակներով.	— —	— —	— —
5. Մասնաւոր ընթացիկ հաշիւ պետ. բանկի Թիֆլ. բաժն. ապահով. տոկոս. թղթերով	— —	— —	— —
6. Թղթակիցներ՝	— —	— —	— —
ա) Նոցա հաշիւը (Loro)	8,935,865—90	— —	8,935,865—90
բ) Բանկի հաշիւը (Nostro)	7,813,314—65	— —	7,813,314—65
7. Բաժինների հաշիւը կենտ. վարչութ. հետ.	— —	633,441—20	633,441—20
Կենտրօն. վարչութ. հաշիւը բաժին. հետ.	180,957—01	— —	180,957—01
8. Բանկի բաժնետոմսերու անվճար կտրօնների բաշխը	6,378—60	— —	6,379—60
9. Չը վճարուած տոկոսներ, աւանդների, ընթացիկ հաշիւների և այլ գործողութեանց	92,633—07	41,286—32	133,919—39
10. Ստացուած տոկոսներ և յանձնարարականներ	189,145—94	103,847—02	292,992—96
11. Փոխանցիկ գումարներ	32,456—15	44,560—02	77,016—17
12. Արդիւնք 1890 թ.	— —	— —	— —
Ր. Ա.	22,644,450—87	2,579,491—50	25,223,942—37

ՍԱՐՊԻՆԿԱ ԱՍՎԱԾ ՀԻԻՍՈՒԱԾՔ

„Ա. ԲԷՆԴԷՐ, ՈՐԴԻՆԵՐՈՎ, Ա. ՍՏԵՓԱՆՈՎ ԵՒ Վ. ԲԷՆԴԷՐ“

ԳՈՐԾԱՐԱՆԱՏԷՐԵՐԻ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ

ՍԱՐԱՏՕՎԻՑ

Ցայտնում է Թիֆլիսի պատուելի հասարակութեանը, որ բաց է անում յատուկ մագազին սեփական պատրաստութեան սարպինկա ասված հիւսուածքը, աղլուխները և բամբակեայ գուլպաների գործուածները Թիֆլիսում ծախելու համար:

Սարպինկա մի հիւսուածք է, որը պատրաստվում է ձեռքի միջոցով և այդ նիւթից կարող են պատրաստվել կանանց ամենաշքեղ զգեստներ, մանուկների զգեստներ և տղամարդկանց շապիկներ:

Մագազինը գտնվում է Թիֆլիսում, Սօլոլակում, Աղաբաբովի տանը, որտեղ առաջ գտնվում էր Զիլթախովի դրասենեակը:

ՎԱՃԱՌՈՒՄՆ ՄԱՍ ՄԱՍ

17—20

ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐ ՏԵՂԵԿԱԳԻՐ վաճառականական դասակարգին պատկանող իւրաքանչիւր անձի համար ու ՄԱՏՉԵԼԻ ՁԵՌՆԱՐԿ առևտրական հաշուարարութիւնը առանց ուսուցչի օգնութեան ուսումնասիրելու համար:

Ս. ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻ

ՁԵՌՆԱՐԿ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀԱՇԻԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Տոկոսների լիակատար աղիւսակներով, 1-ից մինչև 10,000 ռուբ. համար. 1%-ից մինչև 12%. Վաճառվում է եղբարց Յովհաննէսների բանկային դրասենեակում և հեղինակի մօտ. Тифлисъ, Нагорная ул., № 9. Օտարաքաղաքացիք դիմում են վերջին հասցէով՝ С. П. Мануэльянцу.

Գինն է 1 ռուբլի: Փոստի ծախս 21 կ. Գրավաճառներին զիջում կը լինի: 47—150

ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ ԱՐԴԻՒՆԱԳՈՐԾՆԵՐԻ ՍԱՐՊԻՆԿԱ ԱՐԴԻՒՆԵՒ» ՍԱՐԱՏՕՎՈՒՄ

ՍԷԶՕՆ 1892 ԹԻՒ —ՍԱՐՊԻՆԿԱ— ՍԷԶՕՆ 1892 ԹԻՒ

Ձեռքի հիւսուածք, սեփական պատրաստութեան Պարիզի վերջին մոդային նմուշներին համեմատ

ՆՈՐ — „ՍԱՐՊԻՆԿԱ-ՐԷԼԻԵՖ“ — ՀԻԻՍՈՒԱԾՔ

Վաճառվում է ամբողջ կտորներով և արշիններով, և ուղարկվում է Ռուսաց կայսրութեան բոլոր քաղաքները: Նմուշներ շքեղ „Ալբոմում“ ուղարկվում են 42 կոպէկով, պօստային մարկաներով: Գրագրութիւն ռուսաց լեզուով:

ՀԱՍՑԷՆ. Саратовъ—Товариществу Сарпинокъ. 3—10 (Ե. Հ.)

ԿԻՆ ԱՏԱՄՆԱԲՈՑԺ Մ. Ր. ՀԷԶՈՒԲԵԱՆ

Ընդունում է հիւանդներին ամեն օր, 9 ժամից առաւօտեան մինչև 5 ժամ կէսօրից յետոյ, Գօլովինսկի պրոսպէկտ, տուն Անանովի, № 22. 6—15

ՆԱԽԱԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ,

ՊԱՊԻՐՈՍՆԵՐԻ ԹՂԹԻ ՏԵՏՐԱԿՆԵՐԻ ԵՒ ԳԻԼԶԱՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ

ՍԷՐԳԷՅ ՄԻԽԱՅԼՈՎԻՉ ԱՆԱՆՈՎԻ

Զգուշացնում է իր բոլոր առնողներին, որ վերջին ժամանակներս, աչքի առջև ունենալով ահագին պահանջ իր ապրանքների և նրանց բարձր արժանաւորութիւնը, հանդէս եկան բազմաթիւ կեղծումներ, և մինչև անգամ «Анановъ» ազգանունը նմանողութեան է ենթարկում, տալով մի և նոյն տառերով Ананасъ» բառը: Հասկանալի է, որ այդ անվում է այն նպատակով, որ Անանովի լաւ տեսակի ապրանքների հետ միաժամանակ ծախվեն և իրանց ստոր տեսակի ապրանքները, որոնք Անանովի ֆաբրիկայի ապրանքների հետ ոչինչ նմանութիւն չունեն: Թէև այդ տեսակ նմանողութիւնները և ապացուցանում են, որ Անանովի ապրանքները ամեն մրցութիւնից դուրս են, սակայն չը կամենալով որ հասարակութիւնը մոլորութեան մէջ ընկնի և վատ ապրանքներ ձեռք բերէ, Անանովի ֆաբրիկան զգուշացնում է, որ իր թղթերի իւրաքանչիւր թերթը կրում է ֆիրմայի դրոշմը և պէտք է պահանջել, որ բոլոր էտիկէտների վրա ստորագրված լինի Սէրգէյ Անանովի ստորագրութիւնը:

ՆԱԽԱԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ

Անանովի գործարանի պապիրոսների թղթի տետրակները և գիլզաները պատրաստվում են ֆրանսիական ամենալաւ և անվնաս թղթից (արժանացած է Բժշկական վարչութեան թոյլատրութեան մարտի 21-ին, 1889 թ.), համարվելով աշխարհիս ամենալաւերը և վարձատրված լինելով 1888 թվին Բրիւսէլի համաշխարհային ցուցահանդէսում մեծ արծաթեայ մեդալով, 1889 թ. Մադրիդի ցուցահանդէսում մեծ ոսկեայ մեդալով, նոյն թվին Մադրիդի jury չնորհեց Անանովին diplome d'honneur, որը համապատասխան է մեր պետական գերբին: Վերջապէս 1890 թվին Անանով ստացաւ Բրիւսէլի միջազգային մրցման ժամանակ մեծ ոսկեայ մեդալ: ՀԱՍՑԷՆ՝ Ростовъ на Дону, Сергѣю Михайловичу Ананову. 7—10

ԲԱՑՎԱԾ Է առաջիկայ 1892 թվի բաժանորդագրութիւնը

Պատկերազարդ „ԱՂԲԻՒՐ“ ամսագրի և „ՏԱՐԱԶ“ շաբաթաթերթի

Կը հրատարակվի նոյն ծրագրով, ուղղութեամբ և աշխատակիցների մասնակցութեամբ: «Աղբիւր» ամսագիրը լոյս է տեսնում իւրաքանչիւր ամիս, իսկ «Տարազ» շաբաթաթերթը՝ ամեն կիրակի, 1—2 տպագրական թերթ:

«Աղբիւր» ամսագրի ծրագիրը.

Ա. Մանկական բաժին. Մանրավէպեր, զրոյցներ, հէքիաթներ, ճանապարհորդութիւններ, կենսագրութիւններ, բանաստեղծութիւններ, գիտութիւն և արուեստ: Նոր-լուրեր. այլ և այլք:

Զուարճալիք—Մանկական ֆրէօբէլեան. շախմատի և այլ խաղեր, ռեբուսներ, թուաբանական խնդիրներ. անեկդոտներ, հանելուկներ, շուտասելուկներ, երգեր նոտաներով:

Բ. բաժին. Կրթութեան և դաստիարակութեան վերաբերեալ յօդուածներ և տեղեկութիւններ: Առաջարկութիւններ. խորհուրդներ: Մատենախօսութիւն և նոր գրքեր: Խառն լուրեր, պատասխաններ, յայտարարութիւններ:

«Տարազի» ծրագիրը

Գեղարուեստ և գիտութիւն: Պատմական և ժամանակակից վէպեր, պատկերներ, թատրոնական գրուածներ: Բանաստեղծութիւն: Քննադատութիւն և կենսագրութիւն: Կար, ձև, ձեռագործ և ամեն նորութիւն արհեստների վերաբերեալ: Տնային արդիւնաբերութիւն, անտեսութիւն: Ճանապարհորդութիւն և արկածք: Երաժշտութիւն և թատրոն: Ժամանակագրական լուրեր, տեղեկութիւններ, յօդուածներ և այլն: Ֆէլիետոն, ծաղր, առած, կատակ: Շախմատի և այլ խաղեր, ռեբուս, հարցեր, խորհուրդներ: Այլևայլք, պատասխաններ, յայտարարութիւններ:

«Աղբիւր» ամսագրի և «Տարազ» շաբաթաթերթի առաջիկայ 1892 թվի պրէմիաները

«Աղբիւրի» տասնամեակի առիթով

51 Բաժանորդները կը ստանան յիսուն և մէկ պրէմիա 51

«Աղբիւրի» և «Տարազի» մի և նոյն հասցէով բաժանորդ գրվողը մինչև յունվար ամիսը կը ստանայ ութ №№ (1—8) պրէմիաները, իսկ Մանկավարժական հաւաքածուն յուլիսին և «Աղբիւրի» տասնամեակը դեկտեմբերին: Այնուհետև մնացած 43 ընծաները:

«Աղբիւրի» այն բաժանորդը, որը «Տարազ» չի ստանայ, նրան չի ուղարկվի և 12 հատ ցիսուսեան Գալերէա. Գեղարուեստական ալբոմ Ս. Էջմիածին և իր շրջակայ սրբավայրերը. Նորընտիր կաթողիկոսի և հանգուցեալ հանճարեղ դերասան Ադամեանի պատկերները, Փարիզու մոդաները, «Նրա մայրը» վէպը և պատկերազարդ ուղեցոյց Կովկ. և հանք. ջրերի:

Միմիայն «Տարազ» ստացողին, բացի Պարիզի մոդաներից, ուրիշ ընծայ չի ուղարկվի:

Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունվում: Դեկտեմբերի 15-ից ուշ բաժանորդ գրվողին խմբագրութիւնս պարտական չէ, եթէ մինչև յունվարի 1-ը ուղարկված չը լինեն պրէմիաները:

«Աղբիւրի» տարեկան բաժանորդագինը 3 ր. 28 կ. (10 ֆր.), իսկ «Տարազինը» 6 ր. (20 ֆր.) «Աղբիւր» և «Տարազ» մի և նոյն հասցէով բաժանորդ գրվողը ստանում է 51 պրէմիա, իսկ միայն «Աղբիւրի» բաժանորդը՝ 31 պրէմիա: Տարազն առանձին պրէմիաներ չունի:

Հասցէն՝ Тифлисъ. Редакція журнала «Агбюръ» կամ «Таразъ», Արտասահմանից Tiflis (Caucase) Rédaction «Agbur» et «Taraz»:

2—3 Խմբագիր-հրատարակիչ Տիգրան Նազարեանց

Մեծ շերամապահական հաստատութիւններ ՄՕԼՏԻՖԱՕ ասված տեղում, ԿՕՐՍԻԿԱ կղզում Ֆրանսիայում)

ԱԼՕԻԶԻ ԵՒ ԸՆԿ.

Խնդարհաբար խնդրում է շերամի սերմի յարգելի առնողներին դիմել ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆԸ, կամ Թիֆլիսի շերամապահական կայարանը:

Մեծ քանակութեամբ առնողները թող բարեհաճեն դիմել Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան անդամ պ. Վ. Ա. ՍՈՒԼԽԱՆՈՎԻՆ, Թիֆլիսում, Կուկիա, Նիկոլաեվսկայա փողոց, տուն № 39.

Պ. Ալօիզիի սերմերը ծախվում են 1, 3, 5 և 10 զլօտնիկ կշռող արկղներում, հաշուելով իւրաքանչիւր զլօտնիկը 60 կոպէկով: Սերմի լաւութեան երաշխաւորութիւն կարող է լինել այն, որ ինքն պ. Ալօիզի վարձատրված է պատուաւոր դիպլոմով և ցելիւլէր սերմի պաշտօնական հայթայթող է Թուրքեստան երկրում:

3—16 (շ.) Ց. ԱԼՕԻԶԻ

ՓԻԼԻՊՊՈՍ Վ. ԱՐԴԱՆԵԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ԳՐՔԵՐԸ

1)	ՇՄԻԴԹ, «Ֆրանկլին», 2 տիպ. սակաւաթիւ	— ր. 40 կ.
2)	» «Վաշինգտոն», 2 տիպ.	— » 60 »
3)	» «Հոմերի Իլիականը», պատկերներով.	1 » — »
4)	» «Հոմերի Ոդիսականը» »	1 » 20 »
5)	ՍՄԱՅԼՍ, «Բնաւորութիւն»	1 » 50 »
6)	ԱՄԻՉԻՍ, «Սիրտ».	1 » — »
7)	» «Ապէնինների մինչև Անդէրը»	— » 10 »
8)	«Ռուստէմ և Զոհրաբ»	— » 20 »
9)	ՇԻԼԼԷՐ «Աւազակներ», ողբերգութիւն.	— » 50 »
10)	ՍՄԱՅԼՍ, «Ինքնօգնութիւն»	1 » 50 »
11)	ՏՕԼՍՏՕՅ, «Ռօբինզոն», փոքրերի համար	— » 20 »
12)	» «Կոլումբ», փոքրերի համար	— » 15 »
13)	ՀԱՅԶԷ, «Բէաթրիչէ, վէպիկ	— » 30 »
14)	» «Նօնցայի բերդը», վէպիկ	— » 30 »
15)	ՇՄԻԴԹ, «Ռէյնեկէ աղուէսը	— » 60 »

Ճանապարհածախսը թարգմանչի վրա է: Վաճառվում են թարգմանչի մօտ՝ Тифлисъ, Садовая, Маріино-Анановское училище, և կենտրոնական գրավաճառանոցում: 10—10 (Շ)

Ա. ՐԱԼԼԷ ԵՒ ԸՆԿ.

ՄՕՍԿՎԱՅՈՒՄ

ՊԱԼԱՏԱԿԱՆ ՀԱՅԹԱՅԹՈՂՆԵՐ

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՀՆԱՐԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա. ՐԱԼԼԷ և ԸՆԿ. ԳՈՐԾԱՐԱՆԻ

ՄԱԽՄՈՒՐԻ ՊՈՒԴՐ

ԳԼԻՑԵՐԻՆԵԱՆ ԾԱՂԿԱՀԻՒԹ ՍԱՊՕՆ

ՁՈՒԻ ՍԱՊՕՆ

ՄԱՔՐՎԱԾ ԾԱՂԿԱՀԻՒԹ ՕԴԸԿՕԼՕՆ.

Ծախվում է ռուսաց կայսրութեան բոլոր քաղաքներում: ՊՐԷՅՍ-ԿՈՒՐԱՆՏ ուղարկվում է ձրիապէս:

3—5 (շ) № 2.

Մամուլի տակն են և շուտով լոյս կը տեսնեն առանձին հատորով

ՐԱՖՖԻԻ

ՎԷՊԻԿՆԵՐ ԵՒ ՊԱՏԿԵՐՆԵՐ

(տպված և անտիպ ձեռագիրներից

Հեղինակի երիտասարդութեան պատկերով

Գինը կանխիկ վճարողների համար 3 ռուբլի: Լոյս տեսնելուց յետոյ 3 ր. 50 կոպէկ: Յանկացողները կարող են դիմել հեղինակի այրիին հետևեալ հասցէով՝ Тифлисъ, Сергѣевская ул., № 20 *Анны Раффи.* 4—5

ВЫСОЧАЙШЕ УТВЕРЖДЕННОЕ ТОВАРИЩЕСТВО МЕХАНИЧЕСКАГО И ЧУГУННО-ЛИТЕЙНАГО ЗАВОДА

БЕЛЛИНО-ФЕНДЕРИХЪ

ВЪ ОДЕССѢ.

Складъ и производство сельско-хозяйственныхъ и заводскихъ машинъ и орудій, какъ-то:

Постоянныхъ паровыхъ машинъ и котловъ разныхъ системъ и силъ, Мукомольныхъ мельницъ и всякаго рода принадлежностей къ нимъ. Щеретовокъ, вальцовыхъ поставовъ крупосѣекъ, буратовъ и всякихъ другихъ мельничныхъ машинъ системы Г. Даверіо. Лѣсопильныхъ станковъ съ пилами. Конныхъ молотилокъ, и приводовъ, вѣялокъ, соломорѣзкъ, кукурузныхъ молотилокъ—ручныхъ, конныхъ и паровыхъ Прессовъ для винограда и сѣна. Маслобоекъ, брандспойтовъ и пасовъ. Конныхъ грабель «Голинсвортъ».

Производство котельныхъ работъ и отливка изъ чугуна и мѣди.

Выполненіе всякаго рода заказовъ для паровыхъ вальцовыхъ мельницъ, винокуренныхъ, пивоваренныхъ, сахарныхъ и другихъ заводовъ, вагоны для конножелѣзныхъ дорогъ.

Складъ локомобилей, паровыхъ молотилокъ, конныхъ молотилокъ со штифтовыми барабанами и конныхъ приводовъ извѣстной фирмы Клйетонъ и Шутлівортъ въ Линкольнѣ, и Вѣнѣ.

Главный складъ жатвенныхъ машинъ и косилокъ «Желѣзная рама» и «Континенталь» Джонстона.

Единственный складъ вальцовыхъ станковъ Г. ДАВЕРІО въ Цюрихѣ.

Заводъ имѣетъ свой собственный эллингъ для постройки пассажирскихъ и буксирныхъ пароходовъ, паровыхъ катеровъ, баржъ и проч. и принимаетъ заказы на поднятіе на эллингъ судовъ для исправленія или окраски подводныхъ частей и ихъ корпусовъ.

Агентъ въ Ростовѣ н/Д. Г. Я. Золотухинъ, Николаевскій пер. д. Арт. Яблокова, противъ Реальнаго училища кв. № 8.

92—100 (Ե. չ.)

Մ. Գ. ՑԻՑՏԼԻՆԻ

ԺԱՄԱՑՈՑՑՆԵՐԻ ՄԱԳԱԶԻՆԻ

ՕՊՏԻԿԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ

Պալատի այգու դիմաց, անկիւնի մագազինում, ստացված է մեծ ընտրութիւն՝ ոսկեայ, նոր ոսկեայ, նիկելեայ, պողպատեայ և կրիայի ոսկորից ԱԿՆՈՑՆԵՐ, ՊԷՆՍՆԷՆԵՐ և ԼՕՐՆԷՏՆԵՐ: Թատրոնական և դաշտային ԲԻՆՕԿԼՆԵՐ, ՋԵՐՄԱՉԱՓԵՐ, թէ սենեակների, թէ դուրսը կախելու և թէ վաննաների համար: Վերաստուգված և վկայական ունեցող ՄԱԿՍԻՄԱԼ ջերմաչափեր: Լօրնէտի և պէնսնէի համար ոսկեայ, արծաթեայ, նոր-ոսկեայ շղթաներ, նմանապէս մետաքսեայ և մետալական թելեր:

Ակնոցներ և պէնսնէներ տրվում են նմանապէս բժշկների պատուէրով:

Մագազինում յանձն են առնում նմանապէս փչացած իրերի նորոգելը և ապագիների դնելը:

ԳՆԵՐԸ ամենաչափաւոր են:

34—50 (Հ)

Լոյս են տեսել

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Հետևեալ գրքերը.

ԼԱԼՕ, Թիւրքահայերի կեանքից (սպառված)	5 կ.
ԽՕՂԵՐԱ և նրա առաջն առնելու միջոցները	5 „
ԱՑՆՏԵՂ ԵՒ ԱՑՍՏԵՂ, Գրիգոր Արծրունու	10 „
ԱՐՆԱԴԻՆ, Լէօի, (սպառված)	7 „
ՊՍՏԻԿ Է ԲԱՑՑ ՉՍՏԻԿ Է, Լունկեվիչի (սպառված)	5 „
ՀԱՑՐԵՆԱՍԷՐ ՏԻԿԻՆ	5 „
ՄՏՔԻ ՄՇԱԿԸ, Խ. Մալումեանի	50 „
ԼԻՐ ԹԱԳԱՒՈՐ (ըստ Շէկսպիրի)	5 „
ԻՆՉ Է ԿԱՑԾԱԿԸ	5 „
ԳԻՒՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒՀԻ, Շէկդրինի. Թարգ. Խ. Մ.	5 „
ԳԻՒՂԱԿԱՆ ԱՂԲԱՏ / ԳԻՒՂԱԿԱՆ ՉՈՒԹԱԿԱՀԱՐ	5 „
ԵՂԲԱՑՐ ԵՂԲՕՐ ԴԷՄ	7 „
ԵՐԿՐԱՇԱՐԺ ԵՒ ՀՐԱԲՈՒՂԽ	6 „

Տպագրվում է և շուտով լոյս կը տեսնէն կենդանական աշխարհից „Կապիկների կեանքը“, Դարշինի „Արջերը“ և ժողովրդական ընթերցանութեան ուրիշ գրքեր:

Դիմել Թիֆլիս. Խ. Մալումեան

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—10—11 ժ. վիրաբուժութեան (և ատամնացաւի) սիֆիլիսի և աչքացաւի:
ՐՈՒԴԿՕՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ԻՍԱՀԱԿԵԱՆՑ—11½—12 ժ. կանանց և երեխայոց ց.
ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի և քթի ց.
ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—12½—1 ժ. ներքին և երեխայոց ց.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

ԳԱԴՕՄՍԿԻ—5—6½ ժ. կաշուի ցաւերի, սիֆիլիսի և վիրաբուժութեան.
ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. ներքին, երեխայոց և ջղային ց. (էլեկտրոթերապիա);
ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—6—7 ժ.
Վճար—50 կ.: Հաստատորդի (կոնսիլիումի) համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ բժշկապետ Նաւասարդեան

Գլխաւոր պահեստը գտնվում է Թիֆլիսում և բազում բարձրագոյն հաստատված դեղատան ապրանքների վաճառման կովկասեան ընկերութեան մօտ:

43—50 (·2)

ПАРФЮМЕРІЯ ВИКТОРІЯ РЕГИНА.
мыло олео-вазелиновое
РОЯЛЬ-КОНГО.
духи высшаго достоинства
ИСКОРОНАКСЪ И ВІОЛЕТЪ,
О-ДЕ-КОЛОНЪ РОЯЛЬ
О-ДЕ-КОЛОНЪ ПВѢТОЧНЫЙ
РАЗНЫХЪ ЗАПАХОВЪ.
Въ Высочайше утвержденномъ Кавказскомъ Товариществѣ торговли парфюмерными товарами въ Тифлисѣ и Баку.

ՄԱՐՖԻՄԵՐԻ
ՎԻԿՏՕՐԻԱ-ՐԵԳԻՆԱ.
մակարդ
ՐՕՅԱԼ-ԿՕՆԳՕ
օլեո-վազելինեան սապոն
ամենաբարձր տեսակի
ՎԻՈԼԷՏ
անուշահոտութիւններ
ԻՍԱՀԱԿԵԱՆ ԵՒ ՐՕՅԱԼ
ՕԴԵԿՕԼՕՆ
օդեկոլոն ծաղկահիւթ
ԶԱՆԱԶԱՆ
ՀՈՏԵՐԻ
տեղագործական ապրանքների վաճառման կովկասեան ընկերութեան մէջ Թիֆլիսում և բարձրագոյն հաստատված կովկասեան ընկերութեան մէջ Թիֆլիսում:

28—50 (Հ)



ՄԻԶՈՑ ԽԱՐԲՈՒԽԻ ԴԷՄ

բժշկական դեպարտամենտից թոյլատրված

ՕԼՖԱԿՏՕՐԻՈՒՄ ՆՈՒԴԻԼԻՆ

Մ. Լ. ԺԻՐՄՈՒՆՍԿՈՒ

Ծախվում է 40 կոպէկով

Դեղագործական Ապրանքների Վաճառման Կովկասեան Ընկերութեան մէջ Թիֆլիսում:

7—40



ԳԱԼՈՒԱՅԻՆ ՆՈՐ ՇԱՐԺԻՉՆԵՐ

Ասում սիրահարները, որոնք իրանք իրանց են ուզում ամուսնանալ.
Գարշելի համար — ամուսնալ,
Ցանկալի — — — նամակագրել,
Բարեկամներ — — — կերակրել
Ամենի գնորդներ (Գնչի-գիլ) 1/2-ից մինչև 120 ֆիւ. ոսկի:
24
ՌՈՍՏՈՎ (на Дону) Շաղեմարքնաներ մեծ արգասիքներ.
ԲՐ. ԳԼԵԲՈՎԻ
Большая Садовая, 24.

48—100 (Ե. չ.)

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԼՈՒՍԱՆԿՈՐՈՒԹԻՒՆ
Ամի համար ապրածների դրամ.

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՍԱՐԳԵԼԸ.
Էլեկտրական գնդակներ.
ԳԱԼՎԱՆՈՊԼԱՍՏԻԿ.
Էլեմենտներ
Ամբարտաղներ, Էլեմենտներ, Վոլտամետրներ, Գալվանոմետրներ.
ՇԱՆԹԱՐԵԼԻՆԵՐ.
Նախահաշիվներ և ծրագիրներ ձրի-արար.

43—50 (Հ)

Дозволено цензурою, Тифлисъ, 13 Декабря 1891 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.